

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
պրոֆեսոր, մանկ. գիտ. թեկն.
gayane.khalatyan.1958@mail.ru

**ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
Մ. ԳԱԼՇՈՅԱՆԻ «ՄԱՐՈՒԹԱ ՍԱՐԻ ԱՄՊԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ
ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր և արտահայտություններ. կերպարների անհատականացում, ժողովրդական լեզվամտածողություն, գրաբարյան տարրեր, նախդիրների կիրառություն, դերանունների բարբառային կիրառություն, բայի խոնարհման բարբառային դրսևորում:

Ключевые слова и выражения: индивидуализация образов, народное языковое мышление, применение предлогов, диалектическое применение местоимений, диалектическое проявление спряжений глаголов.

Key words and expressions. Individualization of characters, folklore language thinking, use of prepositions, dialectic use of pronouns, dialectic application of conjugation of verbs

Գալշոյանական կերպարների լեզուն տարբերվում է հեղինակի լեզվից, որովհետև այն պատանեկության տարիներին սովորած լեզուն է, էրգրի լեզուն՝ իրեն բնորոշ շեշտադրմամբ, հնչյունական-արտասանական առոգանությամբ, ինչպես բառապաշարով, այնպես էլ քերականական ժողովրդական ձևերով:

Հեղինակն ըստ անհրաժեշտության վարպետորեն օգտվել է բարբառներից, ժողովրդական լեզվից և գործածել ժողովրդի լեզվամտածողությանը բնորոշ ձևաբանական հետաքրքրական իրողություններ, որոնց միջոցով ձգտել է ոճավորել կերպարների խոսքը: Մ.Գալշոյանը լավ գիտի ժողովրդական-բարբառային քերականական իրողությունների ոճական-արտահայտչական արժեքը, որովհետև գրական հայերենի հարստացման աղբյուրներից մեկն էլ բարբառային կամ ժողովրդախոսակցական բառերն են, բառաձևերը կամ քերականական ձևերը: Վերոնշյալների ստեղծողը ժողովուրդն է: Նույնիսկ 19-րդ դարի չորրորդ քառորդում լայն տեղ էր տրվում ժողովրդախոսակցական լեզվին: Քննենք ձևաբանական մի քանի իրողություններ:

Հետաքրքրական են որոշիչ հոդերի գործածության դեպքերը կերպարների խոսքում:

Նկատենք, որ գրաբարից աշխարհաբարին է անցել *ն* որոշիչ հոդը, հետագայում ավելացել է *ը*-ն՝ որպես *ն*-ի դիրքային տարբերակ: Ուշադրություն է գրավում ոճավորման մի նրբագիծ. հերոսների խոսքում կա՛մ բացակայում է *ը* հոդը, կա՛մ գործածվում է միայն *ն* հոդը: Անորոշության կարգը դրսևորվում է ինչպես *ը*, *ն* հոդերի բացակայությամբ, այնպես էլ *մի* անորոշ հոդի առկայությամբ, որը հաճախ գործածվում է իբրև անորոշ դերանուն¹: Խոսքի բնորոշ առանձնահատկություններից է որոշիչ հոդի բացթողումը: Հարկ է արձանագրել, որ անորոշ առումով գործածված գոյականները խիստ առանձնանում են, առարկաները գտնվում են խոսողի ուշադրության կենտրոնում, որի հետևանքով և սպասվում են հետագա տեղեկություններ այդ առանձնացված առարկաների մասին²:

«Թե իմ լսած ճիշտ է, էս մարդ մեր նախագահի աթոռին աչք ունի», - մտածեց Ներսեսն (էջ 49): «Ես էդ մարդու մասին ի՞նչ կմտածիմ, ու էդ մարդ ճիշտ ու ճիշտ *իմ* մտածածն է...» (էջ 52): Հր. Աճառյանը հետևյալ կերպ է մեկնաբանում հոդերի կիրառությունը. «Ստացական ածականներէն յետոց գոյականին վրայ յօդ չի դրուիր. այսպես է գրաբարի և բոլոր եւրոպական լեզուներուն մէջ, բացի իտալերէնէ: Աշխարհաբարը կ'ըսէ *մեր հացը, ձեր տունը*, ումի ճիւղին մէջ իմ բարեկամը, քու ժողովուրդը ...: Մշոյ բարբառն ալ *կ'ըսէ մըր* հաց մեր հացը, *մըր* տուն մեր տունը, գրաբար՝ հաց մեր, տուն մեր են»³:

-*Քու սիրտ* լե՛ն պահե, լաո՛,- հանգստացրեց Ջորոն,-կպատահի. բարին էլ էս էր (էջ 8):

-Օդորմի *ուր հոք*, - Հերոն հանգիստ շունչ քաշեց (էջ 103): -Ա՛յ էսպես, աստված *քու տուն* սարքե, ինչո՞ւ են առվակի դեմն առե,- դիտողություն արեց Մաշտոցին (էջ 281): -Իմ *հերն* ու *Ծովասար* կանչին զիս, Խաչո՛... *Առավոտ* կերթամ, *առավոտ* ճամփորդ եմ (էջ 72):

Որոշիչ հոդի գործածության համար ժամանակակից հայերենում կան բավական կայուն օրինաչափություններ, որոնցից մեկը բաղաձայնով սկսվող բառից առաջ *ն* հոդ չգործածելն է: Այդ կանոնից խոսքը շեղվում է, երբ հոդառու բառին հաջորդող բառը սկսվում է բաղաձայնով: Վերոնշյալ իրողությունները, անշուշտ, ունեն իրենց արդարացումը: Լեզվական որևէ տարրի ոճական գնահատման չափանիշը տվյալ տարրի համապատասխան լինելն է խոսքի ընդհանուր տրամաբանությանը, կերպարների

¹ Տե՛ս Լ.Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2007, էջ 250:

² Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1983, էջ 108:

³ Հրաչեայ Աճառեան: Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուաց, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 119:

լեզվառճական միջավայրին, նյութի բովանդակությանը, կերպարների մտածողությանը: Անշուշտ, լեզվական տարրի ոճական արժեքը շատ ավելի մեծ է լինում, եթե նրա գործածությունը ոճականորեն պատճառաբանված է, ինչը կարող ենք ասել քննվող նյութի վերաբերյալ:

-Աշո՛տ, դու հոս ի՞նչ կանիս. *գառներն* ո՞վ է քշե (էջ 3): -Թե *ռուսն* հրամայեց, ասկյարն_ո՞վ է, որ հրամանը չկատարի, տղա՛ (էջ 73):

Փաստական նյութի քննությունը վկայում է, որ եթե երկխոսություններում հերոսները իրենց խոսքում գոյականները գործածեն որոշիչ հոդերով և բաղաձայնով սկսվող բառից առաջ, ըստ գրական լեզվի օրինաչափությունների, գործածեն *ը* հոդը, խոսքը կգրկվի հուզարտահայտչական երանգից և կդառնա միապաղաղ:

Մ.Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» ժողովածուում ոճաբանական առումով բավական գործուն է թվի քերականական կարգը: Ժամանակակից գրական հայերենի -*էր*,

-*ներ* հոգնակիակերտ մասնիկներին գուգահեռ կերպարների խոսքում հաճախված են -*ք*,

-*այք*, -*ունք*, -*իկ*, -*անք* և այլ մասնիկներով կազմված հոգնակի ձևեր: Գրաբարյան -*ք* հոգնակիակերտը, գրկվելով այդ իմաստից, ժամանակակից հայերենում բազմաթիվ բառերի կազմում (քարացած ձևերում) մնում է իբրև ածանց և ձեռք է բերել գոյականակերտ ածանցի նշանակություն: Չնայած իր գրաբարյան ծագմանը՝ այդ մասնիկը թափանցել է բարբառները և գործածվում է իբրև հոգնակիակերտ մասնիկ՝ թե՛ առանձին, թե՛ այլ ածանցների հետ միացած: Ուշագրավն այն է, որ երբեմնի գրաբարյան այդ ձևային այժմ տարբերակիչ ոճական դեր է ստանձնել մի շարք բառերի համար, որոնց -*ք*-ով ձևերը հատուկ են ժողովրդական-բարբառային խոսքին:

-*Աշխարքն* է վիրավորե Ջորոյին... Մեջ *աշխարքին* ինչքան մարդ կա, Ջորոյին վիրավորանք է հասցրե (էջ 16): -Փա՛ոք աստծո, *տղեք* ունիմ, Ալե՛, հարսներ ունիմ, կարգված աղջիկներ ունիմ... (էջ 11): -Իմ խանգարիչ քու *երեխեքն* ես, քու աղջիկներն ու քու *տղեք*» (էջ 15): -Սերո՛բ, *գեղացիք* բոլոր իրենց արտերն հերկեցին-ցանեցին, իմը մնաց (էջ 88):

-Ժամանակ-ժամանակ Մելոն կելներ սար՝ *տղերքի* քով... կելներ սար. *տղերքի* համար փող կփչեր, Գևորգ Չաուշի *տղերքի* (էջ 88):

Ժամանակակից հայերենի հոլովական համակարգը բավականաչափ կանոնավոր է: Մ.Գալշոյանը հիմնականում հարազատ է մնացել հոլովման տիպերի ներսում գործող օրինաչափություններին: Լեզվական հարցերում հեղինակի որդեգրած սկզբունքներից մեկը քերականական բազմաթիվ իրողությունների ժողովրդական-բարբառային ձևերի հաճախակի կիրառումն է, որը նկատվում է նաև հոլովական ձևերի ընտրության

հարցում: Հեղինակը հստորեն է օգտվում հոլովների ընձեռած ոճական հնարավորություններից: Հոլովական ձևերի ընտրության ավելի լայն հնարավորություն է տալիս սեռականը:

Ոճական յուրահատուկ երանգավորում ստեղծելու համար Մ.Գալշոյանը գործածում է գրաբարյան *ա* և *ո* թեքությունները: Գրական խոսքի մեջ գործածվելով՝ նշված ձևերը նրան ոչ միայն ժողովրդայնության գունավորում են հաղորդում, այլև այն դարձնում են պատկերավոր ու արտահայտիչ:

- *Կնկա* խելք, - Օհանը շոյեց հարսի մազերը (էջ 75): - *Մշո* գետակը վշշում է քնած քաղաքի ականջի տակ (էջ 77): - Յա՛, բարի *լուստ* աստղ,- աչք բացելու հետ շշնջաց (էջ 126):

Ժողովրդայնության գունավորում է ստեղծում նաև այլ թեքություններով:

- Հայ-հարա՛յ, էլ իմ *աչաց* քուն կգա,- և բռնոցքներով տրորեց աչքերը (էջ 12): - Դավոյի սիրտ տանձ ու խնձոր կուզե, *Բաղդադու* խուրմա է կուզե, Դավոյի սիրտ *Հնդու* նարինջ է կուզե (էջ 64) - Ձեր *ոտաց* տակ, ձեր բոբիկ *ոտաց* տակ հարկ էր, որ սար ու ձոր դմփար... (էջ 206): - Ձունոն ծանրած է. տեսար ու ճամփին ծնեց, գատե... *քոլեն* գատե (էջ 134):

Հատուկ միտվածությամբ ժամանակակից գրական հայերենի հոլովական համակարգից թույլ են տրված մի քանի շեղումներ, որոնք նպաստում են խոսքի ոճավորմանը. դրանով իսկ արդարացվում է նրանց գործածությունը հերոսների խոսքում:

Գրողը հազար ու մի երանգ, իմաստ է տալիս իր հերոսների խոսքին, որի նպատակն է ժողովրդական լեզուն դարձնել ավելի զգացմունքային, հմայիչ, պատկերավոր: Հերոսների խոսքը տիպականացնելու նպատակով հաճախված է գրաբարյան *զ* նախդիրը ժողովրդական լեզվամտածողության հենքի վրա: Մ.Գալշոյանը գրաբարյան բառաձևերը գործածում է անհրաժեշտության պահանջով, որոնք կազմում են հեղինակի ստեղծագործության ոճական երանգավորում ունեցող շերտերից մեկը: Հանրահայտ օրինաչափություն է, որ գրաբարում *հ, յ, գ*, նախդիրները դրվում էին հայցական, բացառական, ներգոյական, պատմական, պարառական հոլովների վրա: Մեջբերենք Հր. Աճառյանի ձևակերպումը. «Հայցականը հին հայերենի նման կը կազմուի *զ* նախդիրով. օր.՝ ըզ հաց՝ զհաց, ըզ մըր տուն՝ զմեր տուն նն: Նախդիրի հայցականի *հ, յ* մասնիկը դեռ կը շարունակուի՝ չուր օրիկն ի մահուն կերթամ *յարտ*»⁴: Այս երևույթը ըստ

⁴ Հրաչեայ Աճառեան: Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուաց, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 119:

էության պահպանվել է Մշո, Սասնա բարբառներում, որը կենսունակ է կերպարների խոսքում: Դա հեղինակին ստիպել է գտնել կերպարներին բնորոշ մի գիծ ու արտահայտություն, որը լինի դիպուկ, ներդաշնակ և՛ միջավայրին, և՛ տվյալ իրավիճակին: Ոճաբանորեն պատճառաբանված է նաև *զ* նախդիրի կիրառությունը սեռական հոլովի հետ: Հարկ է նշել, որ գեղարվեստական գրականության առաքելությունը ոչ միայն գրական լեզվի պահպանումն է, այլ նաև ժողովրդական-բարբառային կենսունակ տարրերի օգտագործումը, որոնց միջոցով է պահպանվում ժողովրդի լեզվամտածողությունը:

-*Ջի՛նչ* է մորթե,- հարցրեց ծերունին (էջ 89): -Ալե՛, ես ու դու կորցրինք *զիրար* ... Իմ խոսք ճշմարի՛տ է, իմ հոգին (էջ 18): - Զիմանա՛մ, թե *զիմ*՝ անուն – ազգանուն ինչի համար է կգրիմ (էջ 45): -Դե՛, քնե՛ք, որ առավոտ շուտ ելնեք, ճանապարհեք *զիս* (էջ 72): - *Ջիս* կգցիմ գեղից դուրս, մութն ընկավ, էլի կդառնամ հոս (էջ 19):

Գրաբարյան բառաձևերի ըստ հարկի կիրառությունն առավել հմայք և հուզականություն է հաղորդում հերոսների խոսքին՝ ստեղծելով միջավայրի բներանգ, ցուցադրելով կերպարի բնական գույներն ու խոսքի կենդանի հնչեղությունը:

Դառնալով դերանուններին՝ վերաբերող ժողովրդախոսակցական-բարբառային կիրառություններին՝ նշենք, որ դրանց գործածությունը նույնպես պատճառաբանված է ստեղծագործության բովանդակությամբ, նյութի թելադրանքով: Հեղինակը հերոսներին խոսեցնելիս նախապատվությունը տալիս է ցուցական դերանունների ժողովրդական նույնանիշներին:

-Ուրիշ բանով լցրե՛ք, *էս* իմ բաժակն է (էջ 11): -*էս* ինչ անուշ գինի էր, Ալե՛,- երգի միջից ու երգահանգ կանչեց Ջորոն,- *էսքան* ծամանակ *էսպես* անուշ գինի էղնի, ու ես անտեղյակ (էջ 12): -Մարաթուկ վկա, իմ ոտքն *էստեղից* դուրս չի ելնի (էջ 12): -Գառներն, է՛, *էնտեղ* են,- անորոշ մեկնեց փայտը (էջ 14):

Ժողովրդախոսակցական ոճին բնորոշ ձև է նաև միջին հայերենին այնքան բնորոշ *մի* անորոշ դերանվան հետադասումը, նաև անձնական երկրորդ դեմքի դերանվան *քու* նույնանիշի կիրառությունը: Սրանք միանգամայն իրենց արդարացումն ունեն, քանի որ ժողովրդական-բարբառային ոճը համապատասխանում է խոսողների ներքին էությանն ու մտածելակերպին: Սովորաբար հեղինակն իր հերոսներին խոսեցնում է ժողովրդական-բարբառային ոճով, որը և նպաստում է կերպարների խոսքին հավաստիություն հաղորդելուն:

-*Քու* դատածն ու ունեցած հալալ էղնի քեզ: Առողջ ու շեն մնաս, օրինանք *քու* տուն ու տեղին, *քու* սեղանին: Բայց բան *մի* ասիմ... (էջ 51): -

Քու հերն *ինձնե* քսան տարի փոքր է ..., կճանչնամ (էջ 86): -Գեղն ու աղեկն *ուստի g* իմանանք, աղա՛ Պետրոս,- պատասխանեց հայրը (էջ 151): - Կխնդրեմ քչիկ *ւի* համբերիս, զիշերով էսքան ճամփա եմ կտրե... (էջ 55): -Շնչիկ *ւի* առնիմ, ակոս *ւի* երկու բացինք, ու ձեզ կեր տամ (էջ 94):

Խոսելով Մ.Գալշոյանի լեզվառճական արվեստի մասին՝ չի կարելի չանդրադառնալ բայական համակարգում հանդիպող *ժողովրդախոսակցական-բարբառային* կիրառություններին, որոնց առատ գործածությամբ հեղինակը փորձ է արել ստեղծել ժամանակի բներանգը, ներկայացնել իր հերոսների հոգեբանությունն ու մտածելակերպը: Բերենք մեկ-երկու օրինակ՝ ապացուցելու, թե հեղինակն ինչպիսի վարպետությամբ է կարողանում իր հերոսներին տիպականացնել՝ նրանց խոսքում գործածելով ժողովրդական լեզվամտածողությանը հատուկ բայաձևեր: Անկասկած է, որ ժողովրդախոսակցական-բարբառային ոչ միայն բառերը, այլև բառաձևերը բարձրացնում են ստեղծագործության գեղարվեստական կշիռը, որակը:

Սահմանական եղանակի անկատարի ձևերի փոխարեն գործածված են ենթադրական եղանակի ձևերը, որը *կը* ճյուղի բարբառների և արևմտահայերենի ազդեցությունն է: Ենթադրականի բայաձևերը նման կիրառություններում ավելի շատ վճռական գործողություն են ցույց տալիս, քան որևէ պայմանից կախված գործողություն և այս առումով արտահայտում են սահմանական եղանակի ապառնիի, երբեմն նաև ներկայի իմաստ:

-Կոիվ է *կերթամ*, Պշու՛կ, կգա՞ս (էջ 57): -Քու սիրտն ի՞նչ *կուզե*, Դավո՛ (էջ 57): -Պառա՛վ, երգիր *կերթամ*,-շտապեց հայտնել (էջ 75): -Անձրև քանց կժի բերան բացիս, հեղեղ աշխարհքն առե բերանն ու *կերթա* (էջ 115):

Կերպարներին լեզվառճական հնարքներով անհատականացնելու, ժողովրդական խավի մտածելակերպը ուրվագծելու միտվածությամբ կիրառվում են հրամայական եղանակի ժողովրդական-բարբառային բայաձևեր: Նկատելի է, որ *է* խոնարհման պարզ բայերի եզակի թվի *իր* վերջավորության փոխարեն գործածվում է *է* խոնարհիչը, մի այլ դեպքում ստակածանց ունեցող *է* խոնարհման անկանոն բայի բուն հրամայականը եզակի թվում կազմվում է *ի* վերջավորությամբ:

-Քու սիրտ լե՛ն *պահե*, լաո՛,- հանգստացրեց Ջորոն (էջ 8): -Տղա՛, *ելի*,- կինը լուրը հասցրեց որդուն (էջ 54): - Փաշա, զիմ թև *ւի բռնե*, -գժված դարձավ գորավարին (էջ 59):

-*Կտրե՛* դրա ձեն,- որոտաց դաշտապահը և հերստտ մոտեցավ (էջ 197):

Որոշ դեպքերում բայերի խոնարհման մեջ *է* լծորդության բայերի *է* խոնարհիչը դառնում է *ի*: Հր.Աճառյանը գրում է. «Բայերու խոնարհման մեջ հայերենի *է* և *է* ձայները դարձած են *ի*. օր. ներկա կը սիրիմ, կը տեսնիմ, կը

սիրի, կը սիրին, ստոր. ասիմ, ուտիմ, ապառ. պիտի սիրիմ, պիտի բ'երիմ, յարակ. տեսեր իմ, տեսեր ինք, տեսեր իք են»⁵:

-Համբերե գիմ խոսքն *ավարտիմ*, ձգու՛կ, համբերե (էջ 264): -Դու երգ *չունի՛ս*, տղա՛, որ էս ժեշտի կտորն առե ու ընկել էս չոլերն (էջ 205): -Քու հոգու մեջ երգ չկա՛, տղա՛, որ *կանգնիս* էս սարի գլխին ու *երգիս...* (էջ 206):

Հեղինակի համար ժողովրդական-բարբառային բառաձևերին դիմելը ոճական միջոց է, սասունցի հերոսներին տիպականացնելու, նրանց խոսքի պարզությունը, Սասնո բարբառի բնական հնչեղությունը ընդգծելու հնարք: Նույնը կարող ենք ասել հարկադրական եղանակի բայաձևերի առնչությամբ: Տեղի, ժամանակաշրջանի, միջավայրի բներանգ է ստեղծում սասունցի հերոսների խոսքում հաճախ գործածվող հարկադրական եղանակի ինքնատիպ մի կիրառություն՝ ենթադրական եղանակի *կ* եղանակիչի և հարկադրական եղանակի *պիտի* եղանակիչի համատեղ գործածություն. մի դեպքում՝ իբրև եղանակիչ, մյուս դեպքում՝ իբրև առանձին բայաձև:

-*Կպիտի* գիմ փոթերն *հանիմ* ու *կանգնիմ* էս անուշ անձրևի տակ (էջ 115): -*Կպիտի* էս փետ քու գլխին *ջարդիմ* (էջ 14):

-Հաց բերե՞մ, ախպե՛ր Զորո: -Հաց չէ, գինի *կպիտի* (էջ 17):

«Հարկադրական եղանակի պիտի եղանակիչը պարզապես պիտիմ բայի եզակի 3-րդ դեմքն է և մենակ իբրև անկախ բայ էլ է գործածվում, ինչպես՝ Աստղին էլ լսող պիտի...»⁶:

Ոճական տեսակետից առավել հետաքրքրական նրբերանգներ է ի հայտ բերում հետադիր կապերի կիրառությունը նախադիր գործառությամբ: Հր.Աճառյանը գրում է. «Շատ նախադրություններ, որոնք ուրիշ բարբառներու մեջ յետադրություններ դարձած են, հոս իրենց բնիկ տեղը կը պահեն, երբեմն իբրև մասնիկ, օր. Վըր մըր տան՝ ի վերայ մերոյ տան, մեր տան վրայ, մըչ մըր տան՝ ի միջի մեր տան, մեր տան մեջ, մըտ ընձի՝ ինձ մօտ, մօտ ինձ...» (էջ 119)⁷:

-Քու գինու պես *գինի մեջ աշխարհքին* չկա ու չի պատահի (էջ 19): -Դավո՛ւ, *մեջ քու երակներուն* եղբան ուժ կա, տղա՛, դու ու՛ր է կերթաս (էջ 64):

Ժողովրդական լեզվամտածողությունն արտահայտող հուզարտահայտչական միջոցների շարքում իրենց ուրույն տեղն ունեն

⁵ Հրաչեայ Աճառեան: Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուաց, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 119:

⁶ Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 327:

⁷ Հրաչեայ Աճառեան: Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուաց, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 119:

ձայնարկությունները: Սրանք գալշոյակական արձակի աշխույժ, կենդանի երկխոսությունների, հերոսների մտորումների, հուշերի ու երազանքների, հույզերի ու ապրումների լեզվական արտահայտության անբաժանելի տարրերն են: Հերոսների խոսքը հուզական է, բնական, ուր հաճախ զգացմունքը արտահայտվում է ձայնարկության միջոցով: Հեղինակը կարողանում է ձայնարկությունների միջոցով առավելագույն կենդանության հասցնել իր հերոսի խոսքը, որի միջոցով ընթերցողը ն' լսում է հերոսին, ն' տեսնում նրա շարժումները, ն' զգում է նրա ցավն ու կարոտը:

-*Հայլենե՛...- հեռու-հեռվի՜ց՝* Ծովասարի փեշի իր արտերից, դարձյալ ետ եկավ հայրս: Էս հին ու նոր օրեր... (էջ 72): -*Օհոոոո՜*, դընգ ու դըհոլի ձեն է,- գլուխ կախ շնչաց Հերոն... (էջ 10): -*Թըրա՜խկ,-* տախտակը շարդվեց: Ափրեն հանդարտ քաշեց, մեխախառն շպրտեց մի կողմ (էջ 141):

Հաճախ ձայնարկությունը փոխարինում է ասելիքին: Հերոսի ներքին ապրումներն ու վիճակը, որոնք արտահայտվում են միայն կարճ ձայնարկությամբ, լրացուցիչ բացատրության կարիք չունեն:

-*Օխա՜շ,-* ափով սրբեց բեղերը: -Իմ սիրտն հովացավ... Էսպես անուշ գինի իմ շրթին չէր դիպել (էջ 10): -*Հայ-հաա՜յ*, էլ իմ աչաց քու՜ն կգա: - Եվ բռնցքներով տրորեց աչքերը (էջ 11): -*Հա, վալլահ,-*կռահեց կնոջ հայացքը: - Խմեցինք ու լավ խմեցինք: Մեր նախագահ պատվավոր մարդ է (էջ 54):

Ամփոփենք: Մեր նպատակն է մեկ հոդվածի ընձեռած հնարավորության սահմաններում ներկայացնել Մ.Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» ժողովածուի ժողովրդախոսակցական-բարբառային ձևաբանական որոշ իրողությունների ոճական առանձնահատկությունները երկխոսություններում, բացահայտել այն բնորոշը, որը հատուկ է կերպարների խոսքին:

Գրականություն

1. Գ. Խալաթյան, Երկխոսությունների ոճական մի քանի հարցերի քննություն ըստ Հովհաննես Թումանյանի պատմվածքների, Լեզու և կրթություն, հավելված «Մանկավարժական միտք» հանդես, Երևան, 2012, էջ 9:
2. Մ. Գալշոյան, Մարութա սարի ամպերը, Երևան, 1998:
3. Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 1983, էջ 108:
4. Հրաչեայ Աճառեան: Լազարեան Ճեմարան Արեւելեան Լեզուաց, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911:
5. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 327:
6. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983, էջ 108:

Գ. Խալաթյան

**Ժողովրդախոսակցական-բարբառային ձևաբանական իրողությունների
ոճական դրսևորումները Մ.Գալշոյանի «Մարութա սարի ամպերը»
ժողովածուի երկխոսություններում
Ամփոփում**

Հոդվածում քննված են ժողովրդախոսակցական-բարբառային ձևաբանական իրողությունների ոճական դրսևորումները Մ.Գալշոյանի «Մարութա սարի ամպերը» ժողովածուի երկխոսություններում: Դիտարկված են Սասնո բարբառին բնորոշ ձևաբանական որոշ իրողություններ՝ հերոսների խոսքում որոշիչ հոդերի բացթողում, գոյականի թվի և հոգնակիակազմության, դերանունների բարբառային դրսևորումներ, բայի խոնարհման բարբառային ինքնատիպ կիրառություններ, հետադիր կապերի նախադասման դեպքեր, ձայնարկությունների ոճական կիրառություններ:

Г. Халатян

**Стилистические проявления диалектических народно-разговорных
морфологических ситуаций в диалогах сборника М. Галшояна «Облака горы
Марута»
Резюме**

В статье рассмотрены стилистические проявления диалектических народно-разговорных морфологических событий в диалогах сборника М. Галшояна «Облака горы Марута» Рассмотрены некоторые морфологические ситуации, присущие сасунскому диалекту: пропуск определенных артиклей в речи героев, диалектические проявления в числе и форме получения множественного числа существительных, местоимений, своеобразное диалектическое применение спряжения глаголов, случаи переходов послелогов в предлоги, стилистические применения междометий.

Gayane Khalatyan

Stylistic manifestations of dialectical folklore and colloquial morphological situation in the dialogues of M. Galshoyan's book entitled "Clouds of Mount Maruta"

Summary

In this article we observed stylistic manifestation of dialectic folklore and colloquial morphological situations in the dialogues of M. Galshoyan's "Clouds of Mount Maruta". We have observed some morphological situations typical for Sasun region dialect: omissions of definite articles in the speech of the characters, dialectical manifestation in the number and form of pluralization of nouns, pronouns, specific dialectical use of verb conjugation, cases of transferring of postpositions into prepositions, stylistic use of interjections.

Խմբագրություն է ուղարկվել 20.07.19

Հանձնարարվել է գրախոսության 24.07.19

Տպագրության է հանձնարարվել 15.10.19